# XVIII Դ. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՈՇԸ

ԶԱՎԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

*XVIII դ. առաջին երեսնամյակի հայ ազատագրական պայքարը երբեք էլ հետազոտողների պակաս չի զգացել և մեր ժողովրդի պատմության այդ հերոսական շրջանը քննող գրեթե անընդգրկելի գրականությունն արտացոլում է նրա համարյա բոլոր կողմերը։ Սակայն, որքան էլ տարօրինակ է, հետազոտողների ուշադրությունից վրիպել է ազատագրական պայքարի դրոշի հարցը, չնայած վավերագրերում կան դրա գոյությունը հավաստող մի շարք ուշագրավ տեղեկություններ։ Առաջին տեղեկությունները վերաբերում են ազատագրական պայքարի արշալույսին։ Հայ ազատագրական պայքարի մեծ երախտավոր Իսրայել Օրին առաջինն էր, որ 1699 թ. սեպտեմբերի 22-ով թվագրվող հուշագրում, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անունով, ստաջ քաշեց դրոշի անհրաժեշտության գաղափարը։ Բավարիայի կուրֆյուրստին հղված այս փաստաթղթի հինգերորդ պարագրաֆում գրված է հետևյալը. «...ձեր կայսրընտրիչ բարձրությունն իր կողմից բավական նպաստած կլինի, եթե տա հազար ձիավոր զորք, հազար դրագուն, հարյուր գրենագեր, քսանհինգ ռմբաձիգ... հարյուր դրոշակ, որոնք կներկայացնեն մի կողմից խաչելությունը և մյուս կողմից՝ սուրբ Գրիգոր Լուսավորչին և պատշաճ մակագրությամբ՝ հայերեն լեզվով։ Դրանով ցույց ենք տալիս, որ այս լավ ժողովուրդը միշտ հուսացել է դուրս գալ գերությունից՝ խաչի զորությամբ և իր հովանավոր սուրբ Գրիգորի միջնորդությամբ։ Դրոշակները պիտի բաժանվեն նահանգներում»[1]։*

*Ինչպես տեսնում ենք, XVIII դ. սկզբի հայ ազատագրական պայքարի առաջին ծրագրային փաստաթղթում Իսրայել Օրին դրոշի նշանակությունը և անհրաժեշտությունը դիտում էր զինվորի, հրազենի և ռազմատեխնիկական այլ միջոցների հետ հավասարարժեք հարաբերության մեջ, նույնիսկ բացատրում դրա բարոյաբաղաքական նշանակությունը և նկարագրում ձևը։ Ըստ նրա, հայ ազատագրական պայքարի դրոշը պետք է ներկայացներ պաստառ, որի մի երեսին պատկերված էր լինելու Քրիստոսի խաչելությունը, իսկ մյուսին՝ Գրիգոր Լուսավորիչը։ Եվ, ինչպես նշում է Իսրայել Օրին, այն պետք է խորհրդանշեր հայերի՝ հանուն հավատի պայքարը Գրիգոր Լուսավորչի հովանավորությամբ։*

*Հայտնի է, սակայն, որ Իսրայել Օրու այս ծրագիրը եվրոպական որևէ պետություն պաշտոնական քննարկման հարց չդարձրեց և այն չունեցավ գործնական նշանակություն, բայց նրա հիմնական դրույթները դրվեցին հայ ազատագրական շարժման ծրագրային սկզբունքների հետագա մշակման հիմքում։ Դրոշի գաղափարն արտահայտված է նաև Իսրայել Օրու երկրորդ՝ այսպես կոչված «Մոսկովյան ծրագրում» (1701)։ Այստեղ ևս Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման համար պահանջվող ռազմատեխնիկական տարբեր*

---

[1] Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. СПб., 1898, с. 29, *հմմտ. Լեո, Հայոց պատմություն, հ. III, գիրք 2, Երևան, 1973, էջ 49։*

միջոցների հետ Իսրայել Օրին անհրաժեշտ էր գտնում, որպեսզի ռուսական բանակը բերեր նաև «...100 ռազմական դրոշներ, որոնք պետք է բաժանվեին մեր հայկական զինվորական մարդկանց... իսկ այդ դրոշների վրա պետք է նկարված լիներ մի կողմում Տիրոջ խաչելությունը, իսկ մյուս կողմում՝ նորին ցարական մեծության գերբը»[2]։ Ինչպես տեսնում ենք, այս ծրագրում ազատագրական պայքարի դրոշի ձևը որոշ փոփոխության է ենթարկվել, այսպես ասած «ռուսականացվել է», քանի որ «հովանավորության» հարցում սուրբ Գրիգորին փոխարինել է ռուսական գերբը։ Ինչ վերաբերում է հիմնական գաղափարին՝ խաչելությանը կամ խաչին, ապա երկու տարբերակներում էլ դա նույնն է մնացել, այսինքն, նույնն է մնացել հայերի՝ հանուն հավատի պայքարի խորհրդանիշը։

Ինչ խոսք, որ Իսրայել Օրու նման մտահղացումը համապատասխանում էր ժամանակի ոգուն և ժողովրդի տրամադրվածությանը։ Իրոք, եթե հայ ժողովրդական զանգվածներին լրիվ պարզ չէին ազատագրության սոցիալ-տնտեսական ու քաղաքական հետևանքները, ապա քրիստոնյա պետության օգնությամբ ազատագրվելու դեպքում տիրապետող այլակրոն վարչակարգի կողմից ամենուրեք ու ամեն ժամ կիրառվող կրոնական հալածանքներից փրկվելու փաստը հասկանալի էր բոլորին։ Ավելին, հայերի ազատագրության գաղափարախոսությունը հենց պարուրված էր կրոնական ազատագրության շղարշով, մի բան, որ դեռևս համապատասխանում էր միջնադարի ոգուն, երբ «մասսաների զգացմունքները սնուցվում էին բացառապես կրոնական սենդով»[3]։ Պատահական չէ, որ ինչպես այդ, այնպես էլ հետագա շրջանի համարյա բոլոր աղերսագրերում հայ քաղաքական շրջանները, որպես կանոն, միշտ էլ շեշտում էին կրոնական հալածանքների սաստկությունը և ռուսական կառավարությանը համոզում իրենց դրանից ազատել։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի ազատագրման դեռևս առաջին ծրագրերում նախատեսվում էր պայքարը մղել սեփական դրոշի ներքո, որը ժողովրդին պետք է համախմբեր կրոնական ազատագրության մասսայականություն վայելող գաղափարով։

Ինչպիսի՞ ճակատագիր է ունեցել Իսրայել Օրու հայ ազատագրական պայքարը սեփական դրոշի տակ մղելու դաղափարը։ Սյունիքի և Ղարաբաղի լեռներում մղված տևական հերոսամարտերն ընթացե՞լ են, արդյոք, սեփական դրոշի տակ և եթե այո, ապա այն պահպանե՞լ է Իսրայել Օրու ծրագրած վերոհիշյալ իմաստը, թե՞ ոչ։

Վավերագրային տեղեկություններ կան նաև այդ մասին։ Վերջերս հրապարակված արխիվային մի փաստաթղթի հավաստի վկայությունները հնարավորություն են տալիս XVIII դ. 20-ական թվականների ազատագրական կռիվներում սեփական դրոշի գոյության օգտին արժանահավատ եզրակացությունների հանգել։ Նշված վավերագիրը 1730 թ. հուլիսի 29-ին Կ. Պոլսի ռուսական ռեզիդենտ Ի. Նեպլյուևի՝ ցարական արքունիք հղած զեկուցագիրն է։

Այս զեկուցագրում ռուսական ռեզիդենտը հաղորդում էր, որ նույն թվականի հուլիսի 26-ին իրեն է ներկայացել սուլթանի պաշտոնական ներկայացուցիչը և հաղորդել ռուսական կողմին թուրքական կառավարության ներկայացրած ռազմաքաղաքական բնույթի մեղադրանքները, որոնցից մեկում ասված է

---

2 Г. А. Эзов, նշվ. աշխ., վավ. № 43, § 1.

3 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 21, с. 314.

հետևյալը. «Ի. Ռեզիդենտին (Ի. Նեպլյուևին—Զ. Ա.) իբր հայտնի է, որ, ըստ տրակտատի. Բ. Դռանը պատկանող սղնախներում ապրող հայ ժողովուրդն ըստ էության սահմանակից չէ Ռուսաստանին, սակայն քանի որ այդ լեռնային տեղանքն ամուր է, այդ իսկ պատճառով այդ ժողովուրդները Բ. Դռանը բոլորովին հպատակություն չեն ցուցաբերել, որոնց դեմ և նրանց հնազանդեցնելու նպատակով, մեր կողմից բազմիցս զորք ենք ուղարկել, ինչպես և հիմա Գյանջայի Իբրահիմ-փաշան է զորք ուղարկել, որին նրանք դիմադրել են, ունենալով ռուսական կայսրության դրոշներ, սակայն ի վերջո պարտվել են և նրանցից խլվել է երկու դրոշ և որոշ մարդիկ գերի են վերցվել ու հարցաքննվել. ինչպես նաև նրանց մոտ գտնվել են հայերեն լեզվով նամակներ այն թղթակցությունից, որ նրանք ունեցել են գեներալ Ռումյանցևի մոտ գտնվող մյուս հայերի հետ։ Նրանց մոտ նաև գտնվել են ռուսական արքունիքի կողմից տրված երեք անձնագիր և, ընդ որում, ինչպես հայերեն նամակները, այնպես էլ ռուսական անձնագրերը ռեզիդենտին են հաղորդվել և դրոշներն էլ ցույց են տրվել։ Դրոշներից մեկը սպիտակ մետաքսի վրա է՝ ռուսական գերբով, բայց այդ գերբը տարբերվում է նրանով, որ սպիտակ ֆոնի վրա [պատկերում է] կարմիր արծիվ, որտեղ գլուխներն են երկճյուղվում՝ այստեղ խաչ և Արծվից և թագից վերև՝ աստա. տարածության վրա, մի քանի խաչեր են և թռչող սուրբ հոգու կերպարանքով աղավնի։ Բացի այդ, վերին անկյունում երկնագույն գնդաձև փայտե կոթով դրոշային պղնձաձույլ գեղարդ է, որի մեջտեղում խաչ է։ Մյուս դրոշը խաչերով է և աստղերով, նույնպիսի կտորի վրա, նույնպիսի գեղարդով, միայն առանց գերբերի»[4]։

Ռուսական ռեզիդենտը, իհարկե, հերքել է ներկայացված մեղադրանքները։ Քանի որ այդ հերքումը ևս քննվող հարցի լուսաբանման համար կարևոր փաստեր է պարունակում, ուստի մեջբերենք նաև այն. «2... Բ. Դռանն իրեն հայտնի է, որ մինչև այսօր նորին կայսերական մեծության արքունիքից սղնախների հայերին ոչ մի օգնություն ցույց չի տրվել ո՛չ մարդկանցով, ո՛չ զենքով, ո՛չ դրամով, ո՛չ հանդերձանքով և իրողությունն այն է, որ կայսերական արքունիքը հայերի՝ որպես Բ. Դռան ենթակաների, գործերին չի խառնվել և չի խառնվում։ ...իսկ ինչ վերաբերում է դրոշներին [ապա] նրանք կայսերական արքունիքից չեն ուղարկված և իրենք են վկայում, որ չեն համընկնում ռուսական գերբին, որի հաստատման համար ռեզիդենտը Բ. Դռան թարգմանչին տրվեց ռուսական դրոշմված գերբը և դրոշները (ռուսական—Զ. Ա.) ու միաժամանակ ասաց, որ այն (Բ. Դռան ներկայացրած—Զ. Ա.) դրոշները հայերն իրենք են պատրաստել...»[5]։

Ի. Նեպլյուևի մերժողական պատասխանը դիվանագիտական քայլ էր և նպատակ ուներ չսրելու այն հարաբերությունները, որ գոյություն ունեին Ռուսաստանի և Թուրքիայի միջև, համաձայն 1724 թ. նրանց միջև կնքված տրակտատի։ Ինչ խոսք, ռուսական կառավարությունը շահագրգռված էր հայ ազատագրական շարժմամբ և հնարավոր բոլոր միջոցներով ձգտում էր խրախուսել այն։

---

4 «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века». т. III, Ереван, 1978, док. № 5.

5 Նույն տեղում։

Ի. Նեպլյուևի գեկուցագիրը խնդրո առարկա հարցի կապակցությամբ ավելի բան ուշագրավ է։ Պարզվում է, որ XVIII դ. 20-ական թվականների հերոսամարտերում հայկական սղնախներն ունեցել են մարտական դրոշներ, մի հանգամանք, որը պետք է ավելի համառ ու տևական բնույթ տար թուրքական ռազմակալման դեմ հայերի փոքրաթիվ ուժերի դիմադրությանը։ Պատահական չէ, որ թուրքական պատվիրակը ինքն է շեշտել, որ սղնախների պաշտպանները Ռ. Դոանը բացարձակ հպատակություն չեն ցուցաբերել։

Որտեղի՞ց կարող էին այդ դրոշները հայտնվել սղնախներում, առնչություն ունե՞ն, արդյոք, դրանք Իսրայել Օրու ծրագրերում նախատեսվածների հետ և եթե այո, ապա դրանցից ո՞րը կարող էր լինել հայ ապստամբների մարտական դրոշը։

Ի. Նեպլյուևի նկարագրած և Իսրայել Օրու ծրագրած դրոշների համեմատությունից պարզվում է, որ թուրքերի գրաված առաջին դրոշն ընդհանրություններ ունի «Մոսկովյան ծրագրով» նախատեսվածի հետ։ Երկու դրոշների համար էլ ընդհանուր են ռուսական գերբը և խաչը, միայն տարբեր դասավորությամբ։ Եթե Իսրայել Օրու նախատեսած դրոշի վրա խաչը և ռուսական գերբը պատկերվելու էին պաստառի տարբեր երեսներին, ապա գրավված դրոշի վրա այդ երկու խորհրդանիշերը պաստառի նույն երեսին են։ Դրանց տարբերությունն այն է, որ գրավված դրոշի վրա ավելացված է սուրբ հոգին խորհրդանշող աղավնին և գերբի այն մասում, որտեղ պետք է երկճյուղվեն արծվի գլուխները՝ միայն խաչ է։ Ինչպես տեսնում ենք, գրավված դրոշը բովանդակում է Իսրայել Օրու նախատեսած բոլոր խորհրդանիշերը՝ խաչ (խաչելություն), ռուսական գերբ, սուրբ ուժի միջամտություն՝ միայն դրանց քանակի և դասավորության տարբերությամբ։ Այլ կերպ ասած, սա Իսրայել Օրու առաջարկած դրոշն է՝ մասնակի ձևափոխությամբ։

Ամենայն հավանականությամբ սա «ներմուծված» դրոշ էր, մեկը նրանցից, որոնք նախատեսված էին Իսրայել Օրու «Մոսկովյան ծրագրում»։ Այդ դրոշները որոշ փոփոխություններով պատրաստվել էին Ռուսաստանում և քաղաքական նպատակներով բերվել Հայաստան։ Եվ իրոք, այդ դրոշի պատրաստման հետ կապված տեխնիկական բարդությունները բացառում են դրա՝ Ղարաբաղում կամ Սյունիքում պատրաստված լինելը։ Այժմ տեսնենք, թե այդ դրոշը կարո՞ղ էր, արդյոք, հայ ազատագրական պայքարի խորհրդանիշ ծառայել։ Կարծում ենք, որ ոչ և ահա թե ինչու։

Բանն այն է, որ XVIII դ. 20-ական թվականների ազատագրական կռիվները հայերը մղում էին պարսկական տիրապետության թոթափման և ապա թուրքական ռազմակալման դեմ։ Հայտնի է նաև, որ այդ պայքարն ընթանում էր հայերի ռուսական կողմնորոշման պայմաններում, մի հանգամանք, որն ազատագրական շարժման ղեկավարները աշխատում էին խիստ գաղտնի պահել։ Դա հետապնդում էր երկու նպատակ. նախ, բթացնել հակառակորդի զգոնությունը՝ հայերի գինված պայքարում ռուսական կառավարության շահագրգռվածության հարցում, և հետո, գաղտնի պահել հենց իրենց՝ հայերի, ակնկալությունները ռուսական խոստացվող օգնություն ստանալու գործում։ Իսկ դա, վերջին հաշվով, հանգում էր նրան, որ հայերը դրանով ձգտում էին մեղմացնել, ավելին, կասեցնել հակառակորդի ակտիվ ռազմական գործողությունները, նախքան ռուսական զինական օգնություն ստանալը։ Դիվանագիտական այսպիսի քայլերի մասին վկայում են հենց իրենք՝ հայերը, ռուսական իշխա-

նություններին հղած բազմաթիվ նամակներում և խնդրագրերում[6]։ Նման պայմաններում խելամիտ չէր լինի հայ ազատագրական պայքարի օջախներում պարզել ռուսական գերբը կրող և, ռուսական պետության շահագրգռվածությունն արտացոլող դրոշ։ Այդ դրոշին վիճակված էր խաղալու այլ դեր։ Մեր կարծիքով այն խորհրդանշում էր ռուսական կառավարության՝ հայերին օգնելու և նրանց իր հովանու տակ առնելու պատրաստակամությունը, այսինքն, դա ևս մի փաստավկա էր այդ հարցում կամ հայերը նման հավաստիացումների արտահայտությունը տեսնում էին դրա մեջ։ Հետևաբար, այս դրոշը, Պյոտր I-ի և Եկատերինա I-ի հրովարտակների հետ հայ քաղաքական շրջանների համար ծառայում էր որպես խթան՝ ազատագրական շարժման տևականությունն ու քաղաքական հիմքերի կայունությունն ապահովելու հարցում և կոչված էր հավաստի գույներով ներկելու խոստացված ռուսական օգնությունը ստանալու հայերի ակնկալությունները։ Ռուսական կառավարության նման հավաստիացումները հայերի համար այնքան իրական էին հնչում, որքան այդ օգնության հնարավորությունները (ռուսական զորքերը գտնվում էին երկու քայլի վրա՝ Մերձկասպյան շրջաններում) և դրանից էլ բխող՝ հայերի ակնկալություններն այնքան առօրյա ու անմիջական էին, որ ռուսական գերբը կրող դրոշի գոյությունը հայ ապստամբները կդիտեին որպես օրինաչափություն։ Տրամաբանական է, որ նրա գործնական նշանակությունը պետք է ուղիղ համեմատական հարաբերության մեջ գտնվեր Անդրկովկասում ռուսական զորքերի առաջխաղացումների հետ։ Նման պարագայում հայերն այդ դրոշը պիտի պարզեին իրենց շարժմանը քաղաքական գունավորում տալու նպատակով միայն։ Այսինքն, եթե ռուսական զորքերը մտնեին Հայաստան և տեղի ունենար հայ-ռուսական զինական ուժերի միավորում կամ ռուսական զորքը գրավեր Շամախին և հայկական ուժերը գնային նրան ընդառաջ, ապա այդպիսի պարագայում հայերի պարզած ռուսական տարբերանշանով դրոշը պետք է խորհրդանշեր հայկական զորքի ռուսական կողմնորոշման փաստը։ Բայց քանի դեռ բացակայում էր այդ իրողությունը, ապա չպետք է զգացվեր նաև այդ դրոշի օգտագործման անհրաժեշտությունը։

Ինչպես տեսանք, Ի. Նեպլյուևի զեկուցագրում խոսվում է նաև Թուրքերի գրաված մի այլ դրոշի մասին։ Վերհիշենք զեկուցագրի միայն մեկ նախադասություն կազմող այդ վկայությունը. «Մյուս դրոշը խաչերով է և աստղերով, նույնպիսի կտորի վրա, նույնպիսի գեղարդով, միայն առանց գերբերի»։ Այս դրոշը շատ բաներով է տարբերվում նախորդից։ Սրա վրա չկար ո՛չ ռուսական գերբը և ո՛չ էլ վար սլացող աղավնին, այսինքն, այս դրոշը նույն գեղարդի վրա ամրացված սպիտակ մետաքսի եռանկյունաձև պաստառ էր, որի վրա պատկերված էին խաչեր և աստղեր։ Սա տարբերվում է նաև Իսրայել Օրու ծրագրերում առաջարկված օրինակներից։ Միայն նույնն է այն, ինչ ընդհանուր էր ֆեոդալիզմի ժամանակաշրջանին վերաբերող դրոշներին ընդհանրապես՝ խաչը։ Այս դրոշի վրա պատկերված խորհրդանիշերը ևս համահնչուն էին հայերի ազատագրության նպատակներին. խաչը, ինչպես տեսանք, խորհրդանշում էր հանուն հավատի ազատագրության հայերի պայքարը և այդ բնագավառում հոգևոր

[6] Г. А. Эзов, նշվ. աշխ., վավ. № 210, 211, 232, 236, 240, 248, 249, 273, 274, 276, 277, «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I, Ереван, 1964, док. № 163; т. II, ч. II, Ереван, 1967, док. № 209.

ուժերի հովանավորությունը, իսկ աստղերը, ամենայն հավանականությամբ պետք է արտահայտեին ազատության գաղափարը։

Ելնելով այս խորհրդանիշերի իմաստից, կարող ենք համոզված ասել, որ այս դրոշն ավելի է համապատասխանում հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ավանդույթներին (Իսրայել Օրու նախատեսած դրոշի նախագաղափար տարբերակին՝ մի երեսին խաչելություն, իսկ մյուսին՝ Գրիգոր Լուսավորիչը), քան ռուսական տարբերակով ստեղծված ու սղնախներ բերված օրինակը։ Եվ դա նաև տրամաբանական է, եթե հայերը բնական էին համարում ռուսական զենքի օգնությամբ ազատագրվելու հնարավորությունը, ապա այդ օրինաչափությունը նրանք հասկանում էին «քրիստոնեական սիեզերական մարդասիրության» սկզբունքով միայն, որպես ցանկացած քրիստոնյա պետության պարտականություն՝ հավատակից ժողովուրդներին այլակրոն վարչակարգից ազատագրելու հարցում։ Դա ընդունվում էր որպես ինքնին ճշմարտություն ու պատմականորեն չլուծված հարցերի շարքում կանգնած էր առաջին պլանում և իր հրատապությամբ ու վիթխարի դրվածքով փակում էր ազատագրման սոցիալ-տնտեսական ու քաղաքական հետևանքները դիտելու հայերի տեսադաշտը։ Ուստի հայերի պայքարի դրոշը ևս պետք է արտացոլեր այս ավանդույթը և ռուսական պետությունն արտացոլող դրոշը ոչ միայն չէր կարող հայ ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշը դառնալ, այլ նաև հայերն այդպիսի դրոշի գոյության պայմաններում պետք է ստեղծեին նաև սեփականը, այնպիսին, որն ավելի համապատասխաներ իրենց ձգտումներին։ Պարզ ու հստակ էր հայ ազատագրական շարժման նշանաբանը, այդպես պարզ ու հստակ էին նաև այս դրոշի խորհրդանիշերը։ Այն զերծ էր նախորդների բազմախորհուրդ և բազմիմաստ բարդություններից։ Յուրաքանչյուր հայի համար այստեղ պարզ ու հասկանալի էր խաչի և աստղերի իմաստը։ Բացի այդ, ի տարբերություն առաջինի, այս դրոշի պատրաստման համար հայ լեռնականների հանգապետական տեխնիկական պայմանները բավարարում էին, քանի որ դա ևս բարդությունների հետ չէր կապված՝ պահանջվում էր փայտե կոթ հագցրնել սեփական միջոցներով կռված պղնձյա կլոր գեղարդին (կենտրոնում խաչ) և դրան կապել սպիտակ մետաքսե եռանկյունի կտոր, որի վրա նկարված են պարզունակ խաչեր և աստղեր։ Մի բան, որ լավ թե վատ կարող էին անել ցանկացած լեռնային գյուղում, և այդպիսի դրոշ կարող էր ունենալ յուրաքանչյուր սղնախ։ Եվ սղնախներն էլ ազատորեն, առանց իրենց արարքի քաղաքական հետևանքների մասին մտածելու և դիվանագիտական խնդիրներ շոշափելու, կարող էին ամրությունների վրա պարզել հենց այս՝ հանուն հավատի պայքարը խորհրդանշող դրոշը։ Հայերի նման արարքը և՛ պարսիկները, և՛ թուրքերը կհամարեին օրինաչափ երևույթ։

Այս բոլորը արդյոք չե՞ն խոսում այն մասին, որ 1730 թ. ամռանը գրավված դրոշներից հենց սա է եղել հայ ազատագրական պայքարի դրոշը։ Մեր եզրահանգումներին, կարծում ենք, կօգնի նշված ժամանակաշրջանի դրոշների վերաբերյալ մի վերջին փաստարկ ևս, կապված դարձյալ Իսրայել Օրու անվան հետ։ Հայտնի է, որ Պարսկաստան կատարած դեսպանագնացությունից Ռուսաստան վերադարձի ճանապարհին Իսրայել Օրին Աստրախանում 1711 թ. դե-

դակուր եղավ[7]։ Նրա ունեցվածքի մնացորդները ցուցակագրվեցին և հանձնվեցին Պոսոլսկի պրիկազ։ Այլ իրերի հետ դրանցվեցին նաև «...մետաքսե երեք դրոշ, այդ թվում մեկի վրա թագավորի (ռուսական—Ջ. Ա.) գերբը, մյուսի վրա Հռոմի պապի գերբը, երրորդի վրա նրա՝ պատվիրակի, գերբը, (մեկ) մետաքսե կարմիր դրոշ..., 2 բրդյա (շալի) մեծ դրոշակ...»[8]։ Ինչպես տեսնում ենք, Իսրայել Օրու մոտ եղած դրոշների այս «հավաքածուի» մեջ չկա սպիտակ մետաքսից պատրաստված խաչերով ու աստղերով վերոհիշյալ դրոշը։ Այն որ դրոշներից մեկը պապի գերբն է կրում, ինքնին հասկանալի է, քանի որ Իսրայել Օրին պարսկական շահի մոտ էր գնում պապի պատվիրակի անվան տակ և նրա հանձնարարականով, հետևաբար նա իր հետ պետք է ունենար նաև նրա դրոշը՝ որպես իր առաքելության խորհրդանիշ։ Այս դրոշը հայ ազատագրական շարժման հետ ոչ մի առնչություն չէր կարող ունենալ թեկուզ այն պատճառով, որ եվրոպական երկրների միջոցով ազատագրվելու գաղափարն արդեն կենսունակ չէր հայ քաղաքական շրջաններում, և դրա փոխարեն առաջին պլան էր մղվել Ռուսաստանի միջոցով ազատագրվելու հեռանկարը։ Ուստի նման դրոշը հայ ազատագրական շարժման օջախներում թողնելն անիմաստ կլիներ։

Ռուսական գերբը կրող դրոշն ամենայն հավանականությամբ Իսրայել Օրու՝ հայ ազատագրական շարժման համար նախատեսածից էր։ Ինչ մնում է Իսրայել Օրու սեփական գերբը կրող և նրա դեսպանական անձը ներկայացնող դրոշին, ապա հազիվ թե այն ազատագրական շարժումը խորհրդանշող բովանդակությամբ հայտնվեր սղնախներում։ Բացի այդ, այսպիսի դրոշը Իսրայել Օրին կարող էր ունենալ մեկ կամ երկու հատ, որոնցից մեկը կարող էր պարզած լիներ իր իջևանի վրա, իսկ մյուսը պահեր պահեստի ձևով։ Վերջապես, մյուս դրոշների՝ մի դեպքում գույնը (կարմիր), մյուս դեպքում կտորի որակը (շալ) ևս ինքնին բացառում են սրանց և վերը նկարագրված դրոշների նույնացումը։

Այս բոլորը չե՞ն խոսում, արդյոք, այն մասին, որ Իսրայել Օրին տեղյակ չէր Թուրքերի գրաված երկրորդ դրոշին։ Այդ դրոշը հավանաբար պատրաստվել է հետագայում, ազատագրական կոիվների շրջանում։ Այլապես Իսրայել Օրին ինչո՞ւ չպիտի իր մոտ ունենար նաև այդ դրոշը, թեկուզև ռուսական կառավարությանը ցուցադրելու նպատակով, որպես հայերի ռուսական կողմնորոշման ապացույց, որի համար նա այնքան մեծ ջանքեր էր թափում։ Հետևաբար, այդ դրոշը պատրաստել են իրենք՝ հայերը, տեղում և հենց դա էլ եղել է XVIII դ. 20-ական թվականների հայ ազատագրական շարժման մարտական դրոշը։ Այն պատրաստվել էր դեռևս դարասկզբին Իսրայել Օրու առաջադրած գաղափարով։ որը և վկայում է հայ ազատագրական շարժման ծրագրային սկզբունքների և 20-ական թվականներին բռնկված բացահայտ զինված պայքարի միջև եղած օրգանական կապի մասին։

---

7 Ջ. Ա. Արզումանյան, XVIII դարի 20-ական թվականների հայ ազատագրական շարժման պատմությունից (նոր վավերագրեր), («Պատմության հարցեր», Երևան, 1978, էջ 213—227)։

8 «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I, док. № 140.

# ЗНАМЯ АРМЯНСКОГО ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ XVIII в.

ЗАВЕН АРЗУМАНЯН

**Резюме**

Вопрос о знамени армянского освободительного движения начала XVIII в. до сих пор не привлекал к себе внимания исследователей. Ряд достоверных документальных материалов явствует, что в программных основах армянского освободительного движения лежала идея о необходимости знамени борьбы.

Сравнение знамени, предполагаемого в программах Исраэла Ори, со знаменем, найденным после его смерти в его личных вещах, и со знаменем, захваченным турками в сигнахах в 1730 г., показывает, что знамя освободительной борьбы армянского народа начала XVIII в. представляло собой треугольное шелковое полотнище белого цвета, укрепленное на деревянном древке с копьем. На полотнище были изображены звезды и крестики.